

առաջին քրիստոնեայ թագաւորին. մանաւանդ թէ այն պատճառով, որ մի քանի դար շարունակ մեր նախնիք աղօթել են այս տաճարի յարկի տակ, մեր հայրապետները նորա բեմից քարոզել մսիթարել, ո. Հոգւոյ շնորհներն են բաշխել իրենց հօտին: Խոկ նոցա իւրաքանչիւր բեկոր անկողոպատելի սեփականութիւնն է Ա. Աթոռի, որովհետեւ նորա հայրապետներն են այդ բոլոր շինուածքը կառուցել և սուրբ միւռնով նորա քարերն օծել, որովհետեւ նորա մի միաբանն է՝ նորա և հայ ժողովուրդի նպաստներով, աւերակներն ի յայտ ածել, — լինելով միանդամայն խիստ գնահատելի գիւտ և ընդարձակ հետաշխատութիւնների նիւթ հնախօսական դիտութեան համար:

Կ. Վ.

## ՕՏԱՐ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

### ՈՌԻՍԱՅ ԵԿԵՊԵՑԻ

Ա. Անոնդի օքեր-պարկուրորի ամենահպատակօրէն ներկայացրած հաշեւը, և մեջի այլոց, խիստ հետաքրքրական տեղեկութիւններ է պարունակում Ռուսաստանի աղանդների մասին:

Նա ասում է. Արբազան առաջնորդները ամէն տարուայ հաշեւներից և աղանդաւորների հետ ունեցած խօսակցութիւններից այն եղբակացութեան են եկել, որ նոցա մէծամասնութիւնը եկեղեցւոյ ամենահասարակ ճշմարտութիւնները չգիտէ, և այդ տգիտութեան մէջ մնում են բացառապէս իրենց զեկավարների պատճառով, որոնք ոչ միայն հաւատոյ նկատմամբ վէճի բանուել ուղղափառ հոգևորականութեան հետ թոյլ չեն տալիս, այլ և աշխատում են տեսակցութիւնն անդամ արգելել: Այն ինչ նկատելի է, որ աղանդաւորները հետաքրքրութեամբ են նայում հոգևորականութեան վերայ, ումանք հեռուելց

են դիտում եպիսկոպոսին, ոմանք մօտենում են և լսում նորա ասածները։ Աղանդաւորների հետ ունեցած զրոյցները միայն այն են ապացուցանում, որ նոքա լսում են և տեսնում բոլորովին ուրիշ բան, քան կարող էին ենթագրել ուղղափառ եպիսկոպոսի մէջ նոքա չարութիւն չեն տեսնում, և ոչ էլ նորանից նզոյքներ լսում։ Մի քանիսը նոյն իսկ համարձակութիւն են ունենում տաճար մտնելու և եպիսկոպոսի կատարած պաշտօնը տեսնելու։ Նոքա այստեղ կանոնաւոր երգեցողութիւնը, որին ընտելացել են, բայց այն տարբերութեամբ, որ այստեղ լսածն աւելի ախորժալուր է և հաճելի։ Պերմի թեմակալ առաջնորդը առիթ է ունենում մի քանի աղանդաբնակ տեղերով անցկենալու։ ամէն տեղ էլ աղանդաւորները ընդառաջ են գնացել և խոնարհութեամբ ողջունելու թէև առաջնորդի մօտեցած ժամանակ օրհնութիւնն առնելու չեն գնացել։ Մի գիւղում ճանապարհին աղանդաւորները սեղան են դնում, որի վերայ պատրաստ կային հաց և մեղք։ Խնդրում են առաջնորդին, որ ճաշակէ, այն ինչ իրենք հեռու կանգնած դիտում են։ Երբ առաջնորդը հարցնում է, թէ ինչպէս է, որ նոքա իւր հետ աղօթակից լինելու ցանկութիւն չունենալով հանդերձ իրենց հացն են առաջարկում, արդեօք զեկավարներից կշտամբուելու երկիրզը չէ ստիպում նոցա հեռու կենալ, — աղանդաւորների մեծամասնութիւնը լուռ է, երեկի վախենում է խօսակցութեան բռնուել, ուրիշները վախվրխելով պատասխանում են, որ իրենք տգէտ են, և մեղքը իրենց ծերունիների վերայ են ձգում։

— Պերք. ՅԵՍՏԻԿԵ-ի մէջ «Հիւանդ հարց» վերնագրով մի յօդուածում հետեւեալ խորհրդածութիւններն ենք կարգում։ Եկեղեցական—ծխական կեանքը մէջ ամենայն իրաւունքով հիւանդ կարելի է անուանել այն հարցը, թէ ինչ ձեականութիւններ և նախազգուշութիւններ են հարկաւոր նախ քան պատկր։ Եկեղեցու ամէն մի անդամի, մանաւանդ քահանայի համար, որից կախուած է պսակելու կամ չպսակելու վերջնական վճիռը՝ պարզ է օրէնքի պահանջը—«նախ քան պսակը նկատողութեան առնել բոլոր ձեականութիւնները և նախազգուշութիւնները»։ Սակայն ամէն մի քահանայ դիտէ, թէ ինչպէս դժուար է գործնականութեան մէջ այդ պահանջը միշտ կատարել։ Երբ քահանան կամենում է օրէնքի այդ պահանջը խստութեամբ կատարել, պսակուողներն անքաւական են մնում, երբեմն էլ վերաւորական կասկածանքով վերաբերելում դէպի նորա բարեմտութիւնը։ Բայց դժբաղգաբար այս պահանջի կարելութիւնը չեն հականում յաճախ իրենք պահանջողները, և քանի օրէնքը որոշ

սահմաններ այս նկատմամբ չեղած գծել, թիւրիմացութիւններ և անախորժութիւններ անպական կլինեն:

— „Гражданинъ“ լրագրում մի գիւղական քահանայ նամակ է տպել, ուր շոյց է տալիս, թէ ինչու հոդեռականութիւնը չեղածանում ազգեցութիւն ունենալ գիւղացիների վերայ: Նատերն ասում են, թէ հոդեռականութեան գործունէութեանը արգելք է լինում նորա նիւթապէս անապահով վիճակը, որը կախուած է ծխականներից: Քահանան առարկում է, որ գիւղական հոդեռականութիւնը անգործ չէ, եկեղեցական պաշտամունքներից դուրս նա քարոզում է ժողովրդեան եկեղեցում, դուրս իւր ծխականների հետ զլոյցներ է անում և ընդհանրապէս եռանդուն կերպով տանում է թէ եկեղեցական և թէ դպրոցական գործերը: Այսու հանդերձ նա չեղացում գիւղացիների հասարակական և մասնաւոր կեանքի վերայ, և այս բանի մէջ նիւթական կողմը նշանակութիւն չունի: Պատճառը նա քացարում է մի խելքը գլխին գիւղացու բերանով: Այդ գիւղացին եղել է վեց տարի շարունակ տանուտէր, եղել է ձայնաւոր, երգուեալ, մասնակցել է գտւառական ժողովներին, նստել և վեր է կացել ամէն կարգի և աստիճանի մարդկանց հետ՝ սկսած նահանգապետից: ամէն տեղ, ուր խօսակցութիւն է եղել քահանայի և ծխի մասին՝ նա միշտ լսել է այս խօսքերը: «ան այդ քահանանները, քահանանները՝ նոքա միայն գիտեն քաշել մեռնողից եւ, կենդանի մարդուց էւ» ոչինչ չեն անում, միայն ժողովրդին են խառում, ձրիակերներ են և խարեւաններ: չպէտք է լսել «ոցա»: Այժմ մասնաւանդ հանդէս են եկել ուշ սեալները և նոյնն են քարոզում, ինչ որ ստորին պաշտօնեաւ ները: բոլորն էլ իրանց համարում են թագաւորի սպասաւորներ, նորա կամքը յայտնողներ, և գիւղացին չգիտէ՝ որին լսել և որին հաւատալ: Քահանայի այն հարցին թէ՝ ում պէտք է հաւատալ, նախկին տանուտէրը պատասխանում է. Դուք, քահանաններդ, Աստուծոյ պաշտօնեաններ էք, և ինչ վերաբերում է Աստուծոյ, մենք ձեզ ենք լսում և հաւատում. քահանանների դորձը եկեղեցումն է, իսկ ինչ վերաբերում է աշխարհայինին՝ մենք պէտք է մեր իշխանութեան հնազանդենք. Դուք ինքներդ ասում էք. «Ճուէք Աստուծունը Աստուծոյ և կայսրինը կայզը»: — Այս առթիւ, Պերկ. Ենց. «նկատում է, որ ի՞նչ էլ լինի՝ դորձի ամբողջ պատասխանատութիւնը գարձեալ ընկնում է ժողովրդեան առաջնորդողների վերայ, ողոնք միայն կարող են ժողովրդի բարոյականութեան, առաքինութեան չափը որոշել և այս մասին հաշիւ տալ: Յանկալի զրութիւն կստեղծուէր անշուշտ այն ժամանակ միայն, եթե յեշեալ աստիճանաւորները և

գիւղացի կալուածատերերը, հասարակ գիւղացիների առաջ քահանաներին «խարերայ և ձրիակեր» տիտղոսներով պատուելու փոխարէն՝ ձեռք ձեռքի տային հոգեորականութեան հետ և գործանէին:

Նոյն խնդրի մասին „, Միսսիոներսկօ Օօօրքնու Հանդիսի առաջին դրզում քահանայ Ա. Սմիթեագինը տպել է և Տօլստոյի հետ ունեցած իւր խոսակցութիւնը: Երբ Տօլստոյը հետաքրքրուում է իմանալու, թէ ինչն է արդելում արդեօք ուում քահանաներին լինել աշխարհի լոյս, երկրի ազ, աւետարանական ճըշմարիտ հովիւներ,—քահանան պատասխանում է.

Այդ մասին խօսելը հետու կտանէ, քանի որ այստեղ շատ պատճառներ կան, գլխաւոր պատճառն այն է, որ մեր ձեռքերը և ոտքերը մեր ապահովութեան խնդրով կապուած են: որ մենք տանում ենք նիւթականի տանջանքը, ծխականների ատեւլութիւնը, որ բնտանեկան պարտաւորութիւններ կան՝ կին, եւ բեխաններ, որոնց հարկաւոր է զարոցներում կըթել. այս պարտականութիւր հարկագրում է մեզ աւելի ապրուստի միջոցների ետևից ընկնել, քան թէ հօտի մասին մտածել, և մենք ակամայ դառնում ենք նոյն աշխարհային մարդեկը, որպիսիք են և մեր ծխականները: Առօրեայ կարենները, հոգուը, մեզ հովիւներիս զրկում է իսկական քրիստոնեացի սարի տրամադրութիւնից: Քրիստոնի ճշմարիտ հետեւողը ճշտութեամբ պէտք է հորա ամբողջ վարդապետութիւնը կատարէ. բայց մենք ինչպէս ենք կատարում նորա հենց միայն այս պատուերը. «Որում խընդուէ ի քէն՝ տուր, և որ կամի փոխ առնուլ ի քէն՝ մի՛ դարձուցաներ զերեսս»: «Եւ որ կամիցի ոք դատել և առնուլ զշապեկս քո, թո՛ղ ի նա և զբանկոն քո»: Անհրաժեշտ է, որ նաև հոգեորականութիւնն աշխատէ դո՞ծով ցոյց տալ, թէ ինչպէս պէտք է կատարել Քրիստոնի պատուիրանները, իսկ սորա համար հարկաւոր է որոշեալ չափով ապահովել հոգեորականութեան, և ոչ թէպ ահանջել, որ նա բաւականանայ մուրացկանի մի պատառ հացով: Հակառակ դէպքում՝ ազատել նորանընտանեկան կապերից, քահանայութեան և սարկաւագութեան տեղերը աալով առաւելապէս ամուրի և այրի մարդկանց, ի հարկէ երբ արժանի լինեն ստանձնած պաշտօնին: Խոկ գը. Տօլստոյի այն հարցին, թէ ինչու կուսակրօններն էլ հարկաւոր ազգեցութիւնը չեն գործում ժողովրդի զերայ, թէ և ընտանիք էլ չունին և ապահոված էլ են, քահանան ասում է. «Այդտեղ կրկին շատ պատճառներ կան. կարելի է ասել, որ նոքա աշխարհային կեանքից կտրուած են, գոյութեան համար մզած կուիւը չեն տեսնում: Մեղանում յաճախ կըօնաւոր են դառնում այնպիսի

մարդեկ, որտեսք հանգիստ և առնդորր կեանք են որոնում, որոնք ուզում են իրենց փրկութեան ճանապարհը հեշտացնել, դնել իրենց այնպիսի վիճակի մէջ, որ մեղանչելու քիչ առիթներ ունենան: Իմ կարծիքով վանական կեանքը նախապատրաստութիւն պէտք է լիներ՝ մարդկանց ծառայելու համար: Թող միայնակեացները վանքերը քաշուեն, միայնութեան մէջ ժողովեն իրենց հոգեսր ոյժերը և զարգացնեն, ապա դուքս գան աշխարհ և ծխական քահանաների ու սարկաւագների տեղերը բռնեն, որպէս զի, ընտանեկան կապերից աղատ լինելով, իրապէս բոլորին ցոյց տան, թէ կարելի է ըստ Աւետարանի կեանքը ունենալ: Լաւ վանքերից կարող են լաւ հովիւներ դուքս գալ, այն ինչ ներկայ հանգամանքներում մեր վանքերը հանգիստ և հայեցողական կեանք որոնող մարդկանց ապաստարան են: Կեանքի ներկայ պայմաններում մեր կուսակրօններն էլ չեն կարող ժողովրդին մեծ օգուտ բերել:

— Ռուսաց Եկեղեցին յանձին կիեւի մետրապոլիտ սրբազան թէօդնիստի մեծ կորուստ ունեցաւ յունուարի 22-ին, երբ Նա իւր մահկանացուն կնքեց Պետերբուրգում, ուր եկել է Ս. Սինոդի նիստերին մասնակցելու: Սրբազան թէօդնիստը ծնուել է 1829 թ.-ին. Նորա աշխարհային անունն եղել է նագոր Խվանովիչ Ներեդկու: Նա եղել է առաջնորդ Աստրախանում, Պոդօյլսկում, Վլադիմիրսկում, Նովգորոդում, իսկ 1900 թուին Նշանակուեց կիեւի մետրապոլիտ: Հանգուցեալի տեղն այժմ Բարձրագոյն հրամանով կիեւի մետրապոլիտ է Նշանակուած Խարկովի արքեպիսկոպոս Սրբ. Ֆլաւիանը, որ առաջ էկզարի էր Վրաստանում:

## ԿԸԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

„ԽՈՅԾԻ“ լրագրի Հռովմի թղթակիցը ներկայումս Վատիկանում խօսակցութեան և մտահոգութեան նիւթ կազմող միանաւորութեան մասին է խօսում, որին, աիրող կարծիքների համաձայն, վիճակուած է մօտիկ ապագայում գլխաւոր գերքը խաղալ, այդ կարգինալ կապեցելեատրօն է, որ նորերս ստացաւ՝ Պարօկիկ կարգինալ մահից յետոյ թափուք մնացած, եկեղեցու փոխ-կանցլերի պաշտօնը: Եկեղեցու փոխ-կանցլերի պաշտօնը ինքն ըստ ինքեան վերցրած մի անուանական բան է, սակայն կոնկլաւի օրերում իւր Նշանակութիւնը կունենայ: Կարգինալ կապեցելեատրօն Նշանաւոր տօհմից է և ծնուել է նէապու քաղաքում: Նա իւր ամբողջ կեանքը անց է կացրել գրական աշխատանքներով: Մի քանի տարի շարունակ նա Մարդա-